ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

2017թվականի հունվարի 16-ին ժամը 13$^{00}$-ին հրավիրել Ջրառատ համայնքի ավագանու հերթական նիստ հետևյալ օրակարգով

1. Ջրառատ համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի 2016թ.-ի 4-րդ եռամսյակի կատարման մասին

2. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի սեփականություն հանդիսացող 2016թ.-ի ամենամյա գույքագրման արդյունքները հաստատելու մասին

3. Կոտայքի մարզը Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ________________

գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2

### ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ *որոշում եմ.*

1.Թույլատրել ԱՁ Գրիգոր Գրիգորյանին իր կողմից սպասարկվող առևտրի օբյեկտում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքը:

Թույլտվության գործունեության ժամկետը՝ 2017թ. հունվարի 01-ից 2017թ. դեկտեմբերի 31-ը:

2.Վճարումները կատարել Ջրառատ գյուղական համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետի դրույքաչափերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3

## ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017թվականի ամենամյա արձակուրդների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ________

գ.Ջրառատ

Հաստատված է Ջրառատ համայնքի ղեկավ
2017թ. հունվարի 14-ի թիվ 03 որոշ

**ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ**

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ն/հ | Ազգանուն, անուն | Պաշտոնը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ասատրյան Արթուր | Համայնքի ղեկավար | | | | | | | | | | | | |
| 2 | Սարգսյան Կարինե | Աշխ. քարտուղար | | | | | | | | | | | | |
| 3 | Եղիազարյան Լուսինե | գլխ. Մասնագետ | | | | | | | | | | | | |
| 4 | Պետրոսյան Անթառամ | 1-ին կարգի մասնագետ | | | | | | | | | | | | |
| 5 | Թովմասյան Ռոզա | պահակ | | | | | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՂՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 155-Ա որոշումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար Ջրառատ համայնքի տարածքում առանձնացնել քարոզչական պաստառներ փակցնելու անվճար տեղեր՝ գյուղ Ջրառատ 1-ին փողոց, 12 շենք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ.________________
գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Ընտրական Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների անցկացման համար տեղամասային կենտրոն սահմանել՝ Ջրառատ գյուղի միջնակարգ դպրոցի շենքը / հասցե գ. Ջրառատ 1-ին փողոց, 1 շենք/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ________
գ.Ջրառատ

Լայնակի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6

### ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

2017թվականի փետրվարի15-ին ժամը 13⁰⁰-ին հրավիրել Ջրառատ համայնքի ավագանու հերթական նիստ հետևյալ օրակարգով

Ջրառատ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________

գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 7

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ, 72-րդ հոդվածների ի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2013թվականի օգոստոսի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 20 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշմամբ հաստատված
1/հավելված 1, հավելված-2 շարադրել նոր խմբագրությամբ,
2/հավելված 3-ի 3-րդ կետի <<...Ջրառատ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալի..>> բառերը փոխարինել <<...Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ..>> բառերով,
3/6-րդ կետի <<...համայնքի ղեկավարի տեղակալ Արամիկ Օվչիյանի...>> բառերը փոխարինել <<...համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լուսինե Եղիազարյանի...>> բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2014թվականի հոկտեմբերի 30-ի <<Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2013թվականի օգոստոսի 23-ի թիվ 20 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 21 որոշումը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________

գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 8

### ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ *որոշում եմ.*

1.Թույլատրել ԱՁ Մանիկ Ալեքսանյանին իր կողմից սպասարկվող առևտրի օբյեկտում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքը:

Թույլտվության գործունեության ժամկետը՝ 2017թ. հունվարի 01-ից 2017թ. դեկտեմբերի 31-ը:

2.Վճարումները կատարել Ջրառատ համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետի դրույքաչափերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________ ____
գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 9

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 24-ի <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 164-Ն որոշման 9-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ ենթակետի դրույթներով՝ *որոշում եմ.*

1.Հաստատել՝ Ջրառատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2017թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016թվականի փետրվարի 3-ի <<Ջրառատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2016թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը>> թիվ 3 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________
գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 10

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի ,,բ,, ենթակետի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2017թվականի փետրվարի 7-ի <<Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2013թվականի օգոստոսի 23-ի թիվ 20 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 7որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ. ____________

գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 11

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2013թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 20 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշմամբ հաստատված 1/հավելված 1-ի «...Ջրառատ համայնքի ավագանու անդամ» բառերը փոխարինել «...Ջրառատ համայնքի բնակիչ» բառերով,

2/հավելված 3-ի 3-րդ կետի «..Ջրառատ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալի..» բառերը փոխարինել «..Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի .» բառերով,

3/6-րդ կետի «..համայնքի ղեկավարի տեղակալ Արամիկ Օվչյանի..» բառերը փոխարինել «...համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լուսինե Եղիազարյանի...» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________

գ .Ջ ր առ ատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 12

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թվականի ապրիլի 22-ի <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը հաստատելու մասին>> թիվ 633-Ն որոշման /լրացումներ և փոփոխություններ կատարվել է 2010թվականի օգոստոսի 26-ի թիվ 1187-Ն որոշումով /4-րդ կետի ե/ ենթակետի, 7-րդ կետի պահանջները ՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի կատարումն ապահովող հետևյալ փաստաթղթերը.

ա/ Հիմնական ցուցանիշներ Ջրառատ համայնքի Քաղաքացիական Պաշտպանության վիճակի 01.01.2017թվականի դրությամբ հավելված 1

բ/ Պլան Ջրառատ համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի հավելված 2

գ/ Սխեմա Ջրառատ համայնքի Քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման կապի և ազդարարման հավելված 3

դ/ Պլան Ջրառատ համայնքի Քաղաքացիական Պաշտպանության հետախուզության հավելված 4

ե/ Հաշվարկ Ջրառատ համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հավելված 5

զ/ Հաշվարկ Ջրառատ համայնքի բնակչության պատսպարման հավելված 6

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

# Պ Լ Ա Ն

Գ.ՋՐԱՌԱՏ
2017Թ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջրառատ համայնքի ղեկավարի
2017թ. փետրվարի 10-ի N 12 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

# Պ Լ Ա Ն

## Գլուխ I

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 1.1 ՊԼԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի /այսուհետ համայնք/ քաղաքացիական պաշտպանության պլանը (այսուհետ՝ պլան) սահմանում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տարահանման հանձնաժողովի, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը քաղաքացիական պաշտպանության բնագավառում: Պլանի նպատակն է տեղական ինքնակառավարման մարմնի, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը՝ համայնքի բնակչությանն ու նյութական արժեքները պաշտպանելու համար :

### 1.2 ՊԼԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Պլանում ներգրավվող մարմիններն են՝
   1) համայնքապետարանը,
   2) քաղաքացիական պաշտպանության ծառայությունները,
   3)կազմակերպությունները,
   4) քաղաքացիական պաշտպանության կազմավորումները,
   5)փրկարարական ուժերը:
3. Պլանում ներգրավված մարմինների գործառույթներն են.
   1) տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթներն են.
   ա) կազմակերպում և իրականացնում են համայնքում քաղաքացիական պաշտպանությունը.
   բ) իրականացնում է միջոցառումներ՝ համայնքային ենթակայության կազմակերպությունների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.
   գ) կազմակերպում է համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը.
   դ) իրականացնում է համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը: բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.
   ե) ստեղծում է համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ.
   զ) իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը.

է) ստեղծում է քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում են այդ ուժերի պատրաստականությունը.

ը) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների գործառույթներն են.

ա) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման ժամանակ.

բ) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումն ու պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը եւ քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

3) կազմակերպությունների գործառույթներն են.

ա) իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը.

բ) ստեղծում են փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ուժեր.

գ) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4) փրկարարական ուժերի գործառույթներն են. `

ա) մարդկանց կյանքի փրկության եւ առողջության պահպանման առաջնայնությունը.

փրկարար ուժերի և փրկարարների գործունեությունն արդարացված ռիսկի շրջանակներում.

բ) փրկարարական կազմավորումների կենտրոնացված կառավարումը.

գ) փրկարարական եւ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման, հաղորդակցության ուղիների, կենսաապահովման եւ ռազմավարական նշանակության կազմակերպությունների վերականգնման համար փրկարար ուժերի մշտական պատրաստականությունը:

## 1.3 ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Պլանի իրավական հիմքեր են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը. 2) <<Պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը. 3) <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը. 4) <<Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքը. 5) Հայաստանի Հանրապետության այլ օրենքները և իրավական ակտերը:

# Գլուխ II

# ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

## 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Ջրառատ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի հյուսիս-արևելյան մասում, տարածքը կազմում է 42.39 կմ²: Համայնքի տարածքում բնակելի տների քանակը կազմում է 133, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը՝ 0 միավոր:

Համայնքի բնակչությունը կազմում է 602 մարդ, որից՝ 291 կին, 311 տղամարդ:Բնակչության թվաքանակը ըստ տարիքի՝ մինչև 1 տարեկան 8 մարդ,1-ից 9 տարեկան 74 մարդ, 9-ից 17 տարեկան 87 մարդ, 17 տարեկանից բարձր 433 մարդ: Բնակչության խտությունը 1կմ² վրա կազմում է ___ մարդ:

Համայնքը սահմանակից է Հրազդան քաղաքին (սահմանի երկարությունը 8կմ), Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքին (սահմանի երկարությունը 5կմ);

6. Համայնքում քամիների միջին արագությունն է ______մ/վ, ուղղությունը՝ ___________, անդրրը՝ 20 օր ամռանը, 45 օր՝ ձմռանը:

7. Համայնքի պետական սեփականություն հանդիսացող եվ համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 8 կմ, որից 7 կմ մարզային , 1 կմ համայնքային նշանակության:

9. Համայնքի տարածքում գտնվում /գործում/ են 5 (դպրոց, ֆերմա, կահույքի արտադրամասապ, ԱՀ խանութ) կազմակերպությունները կազմակերպությունները

10. Համայնքի ջրամատակարումն իրականացվում է <<ՍԵՎԱՆ ՋՈՒՐ>> ՓԲԸ-ի կողմից կենտրոնացված ձևով

11. Համայնքի տարածքում խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 161, մանր եղջերավոր կենդանիներ՝ 279, ձիեր և ավանակներ՝ 3, թռչուններ՝ 385 թև:

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

12. Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ համայնքում հնարավոր է հանդիսանան՝

1) Համայնքապետարանի վարչական շենքը.

2) պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող կազմակերպությունները , ջրամբարները.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2 ենթակայանները և դրանց կապող 110 կՎ լարման օդային գծերը.

4) Համայնքը սնուցող ջրամատակարարման համակարգերը.

5) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները..

6) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները.

7) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները:

13. Նկատի ունենալով, որ հակառակորդի կողմից միջուկային, կենսաբանական, քիմիական զենքերի կիրառումը քիչ հավանական է, նաև քիչ հավանական է ՀԱԷԿ-ի նկատմամբ հարվածներ հասցնելը, ուստի համայնքում ճառագայթային իրավիճակի առաջացումը նույնպես քիչ հավանական է:

## 2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Հակառակորդի գործողությունների արդյունքում համայնքի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

Զենքի տեսակների կիրառման դեպքում շենքերը և շինությունները կարող են կրել տարբեր աստիճանների վնասվածքներ, որոնք բաժանվում են՝ լրիվ, ուժեղ, միջին ու թույլ:

Լրիվ վնասվածության դեպքում փլատակներում հիմնականում շենքերի, շինությունների կրող կոնստրուկցիաների, սարքավորումների, կահույքի մասեր են: Կարող են քանդվել նաև պաշտպանական կառույցների ծածկերը, մուտքի պաշտպանիչ դռները, շարքից կարող են դուրս գալ ներսի բոլոր սարքավորումները, հնարավոր է, որ բոլոր պատսպարվածները զոհվեն: Լրիվ

վնասվծության դեպքում շարքից կարող են դուրս գալ նաեւ գազատար եւ ջրատար խողովակները: Կամուրջների լրիվ վնասվածության դեպքում, կամուրջների թռիչքները դեֆորմացվում են եւ երթեւեկությունը կամուրջներով կարող է վերականգնվել հենարանների թռիչքների ուժեղացման աշխատանքներից հետո:

Միջին եւ թույլ վնասվածության դեպքում հիմնականում վնասվում են շենքերի և շինությունների կտուրները, իսկ հիմնական կոնստրուկցիաները պահպանվում են:

15. Համայնքի տարածքի նկատմամբ հակառակորդի գործողությունների հավանականությունը շատ փոքր է, ուստի շենքերի և շինությունների ավերվածության և իրավիճակների առաջացման հավանականությունը նույնպես փոքր է:

16. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և անցկացման վրա ազդող առանձնահատկությունները

1) ընդհանուր օգտագործման տեղական նշանակության ավտոճանապարհների ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կդառնա անձնակազմի տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված տեղամասեր.

2) կընդհատվի ֆիքսված և բջջային հեռախոսակապն ամբողջովին.

3)հեռուստաաշտարակների վնասման դեպքում կընդհատվի կենտրոնական հեռարձակման ալիքների հաղորդումները, տեղական հեռուստաալիքների վնասման դեպքում տեղական հեռարձակումը.

17. Համայնքի տարածքում փրկարարական և փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար նախատեսվում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ 6 հատ, 34 մարդ անձնակազմով: Քաղաքացիական պաշտպանության ուժերը պատրաստականության են բերվում ազդարարման, հավաքի, համալրման, հագեցման, խնդրադրման, անվտանգության գծով հրահանգավորման միջոցով:

Գլուխ III

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

### 3.1 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18 . համայնքապետարանը և կազմակերպությունները <<Մշտական>> պատրաստականության աշխատակարգում զբաղվելով իրենց ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինեն քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը, իսկ <<Բարձր>> և <<Լրիվ>> պատրաստության աշխատակարգի միջոցառումների ցանկը կտրամադրվի մարզային փրկարարական վարչության կողմից Քաղաքացիական Պաշտպանության պլանը գործողության մեջ դնելու ժամանակ:

19. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը <<Բարձր>> պատրաստականության աստիճանի փոխադրվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, տեղական ինքնակառավարման մարմինները ու կազմակերպությունները անցկացնում են <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումներ՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստությանը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացմանը:

20. համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգը փոխադրվում է <<Լրիվ>> պատրաստականության աշխատակարգի Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:

21. Եթե մինչև Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելը քաղաքացիական պաշտպանության <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումները չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ բոլոր միջոցառումները, ապա դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելուց հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետներում:

22. Քաղաքացիական պաշտպանության համակարգի <<Լրիվ>> պատրաստականության աշխատանքային ռեժիմի դեպքում քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը իրենց լիազորությունների սահմանում գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները, կազմակերպում ու անցկացնում են այդ պլաններով նախատեսված միջոցառումները բացի տարահանումից, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինների և տվյալ տարածքի զինվորական կայազորի կողմից՝ իրենց իրավասությունների սահմաններում:

23. Քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու վերաբերյալ ազդանշանները ստացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ) Կոտայքի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետերից:

3.2 ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

24. Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տարահանման հանձնաժողովի, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող կազմակերպությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարների միջև կապն իրականացվում է ռադիոկապի և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

25. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը կազմակերպելու համար օգտագործվում է համայնքում գործող քաղաքային և միջքաղաքային ցանցերը, բջջային և ֆաքսիմիլային կապերը:

3.3 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում:

Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

26. Հետախուզական ուժերի և միջոցների բաշխումը ըստ փրկարարական աշխատանքների տեղամասերի կատարվում է իրավիճակից ելնելով: Հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են ըստ խնդիրների, ուղղությունների, կազմակերպությունների, ժամանակի և գործողությունների տեսակների:

27. Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես:

3.4 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.4.1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

29. Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:

30. Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում զտող և մեկուսացնող հակագազերը, շնչադիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանզիֆային վիրակապերը:

31. Բնակչության պաշտպանության նպատակով օգտագործվում են մի քանի տիպի զտող հակագազեր՝

1) համազորային՝ նախատեսված զորքերի և քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պաշտպանության համար.

2) քաղաքացիական՝ նախատեսված կազմավորումների անձնակազմի և բնակչության համար.

3) արդյունաբերական՝ նախատեսված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

32. Մթնոլորտում թթվածնի անբավարար քանակության դեպքում, ինչպես նաև այն պայմաններում, երբ զտող հակագազերը չեն ապահովում պաշտպանությունը վտանգավոր նյութերից, օգտագործվում են մեկուսացնող հակագազեր:

33. Անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմավորումների անձնակազմին, կազմակերպությունների աշխատողներին և բնակչությանը իրականացվում է անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերում, որոնք ծավալվում են տարահանման և ընդունման հավաքակայաններում, կազմակերպություններում, ուսումնական և բժշկական հաստատություններում:

3.4.2. ՊԱՏՍՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

34. Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է <<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանով:

35. Բնակչության պատսպարումն իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում՝

1) ստորգետնյա հատուկ շինություններում՝ ապաստարաններում, թաքստոցներում (հակաճառագայթային, պարզագույն), նկուղներում, կիսանկուղներում, խորացված տարածքներում.

2) բնակելի ֆոնդի տարածքներում (նկուղային տարածքներ):

36. Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ամրագրված են քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումների ցանկերում և ընդգրկում են՝

1) պաշտպանական կառույցների վաղորոք շինարարություն.

2) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

3) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպում.

4) արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի դեպքում:

37. Բնակչության պատսպարումն իրականացվում է նախորոք մշակված բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկի համաձայն:

3.4.3. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

38. Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, կազմակերպություններում) կարող են առաջանալ

մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

39. Զենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

40. Ռազմական դրության ժամանակ համայնքում տարահանման միջոցառումներ չեն իրականացվում, իսկ արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում ջրածածկման գոտում հայտնված բնակչության մասնակի տարահանման միջոցառումները իրականացվում են հետիոտն՝ անվտանգ գոտի:

41. Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով համայնքի ղեկավարի- քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ ստեղծված է տարահանման- ընդունման հանձնաժողով, որի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է համայնքների ղեկավարի տեղակալը:

## 3.5 ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

### 3.5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

42 Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում: Խոցման օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով Մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

Փրկարարական աշխատանքները ներառում են՝

1) աշխատանքային տեղամասերի և երթուղիների ընդհանուր և հատուկ հետախուզություն.
2) հրդեհների մեկուսացում և մարում.
3) տուժածների որոնում և դուրս բերում վտանգավոր տարածքներից.
4) թաքստոցների և ապաստարանների մուտքերի մաքրում.
5) տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում և բժշկական հաստատություններ տեղափոխում.
6) վտանգավոր տարածքներից բնակչության տարահանում:

49. Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

1) ճանապարհների և կամուրջների մաքրում (վերականգնում).
2) կոմունալ-էներգետիկ և կապի ցանցերում վթարների վերացում ու գործունեության վերականգնում.
3) փլուզմամբ սպառնացող կոնստրուկցիաների (շինությունների) ամրացում կամ փլեցում.
4) թաքստոցների և ապաստարանների վերականգնում.
5) պաշտպանության, տնտեսության համար ռազմական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների գործունեության վերականգնում.
6) փլուզումներում երթուղիների ստեղծում.
7) հասարակական կարգի ապահովում:

43. Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգրավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված ստորաբաժանումները:

44. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

### 3.5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

45. Ուժերի խմբավորումը համայնքում առկա քաղաքացիական պաշտպանության ուժերի մի մասն է՝ նախատեսված կոնկրետ վայրում (տարածքում, ուղղությունում) փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար: Ուժերի խմբավորման կազմը, քանակը և հագեցվածությունը որոշվում է համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով: Ուժերի խմբավորման մեջ ընդգրկվում են՝

1) համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումները.

2) կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության փրկարարական կազմավորումները.

46. Ուժերի խմբավորման մեջ չեն ներառվում պաշտպանության, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

47. Ուժերի խմբավորման անմիջական ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը համայնքի հիմնական, պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

48. Այլ համայնքներից փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու համար ուժեր ներգրավելու կամ ուժեր հատկացնելու որոշումը ընդունում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը:

### 3.6 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 3.6.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

49. համայնքում քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունը:

50. Հասարակական կարգի պահպանման ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, հսկիչ-անցագրային կետերում, երթուղիներում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում.

2) հասարարական կարգի պահպանությունն ուժեղացվում է ոստիկանության համապատասխան ուժերի և միջոցների հաշվին.

3) հսկիչ-անցագրային կետերում հասարակական կարգի պահպանման աշխատանքները կազմակերպվում են ոստիկանության համակարգի ծառայությունների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ.

5) անհրաժեշտության դեպքում հասարակական կարգի պահպանման պահակակետերում, երթուղիներում և զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում իրականացվող աշխատանքներում ներգրավվում են համայնքի հասարակական կարգի պահպանման կազմավորումները:

### 3.6.2. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

51. Քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

52. Հատուկ, կարևորագույն նշանակության կազմակերպություններում հսկվում է հրշեջ կազմավորումների կողմից ուժեղացված ծառայության կազմակերպումը, նախապատրաստվում են հակահրդեհային ջրամատակարարման պահեստային աղբյուրները (փակ ջրավազաններ, հրշեջ հիդրանտներ և այլն), ճշտվում են ջրամատակարարման խնդիրները:

53. համայնքի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման դեպքում հրդեհաշիջման աշխատանքներին ընդգրկվում է նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, հասարակական ուժերը և բնակչությանը:

54. Պրոֆիլակտիկ նկատառումներից ելնելով, բնակչությունը տեղեկացվում է ռազմական իրավիճակում հակահրդեհային լրացուցիչ միջոցառումների մասին;

### 3.6.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

55. Քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի կազմակերպությունների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

56. համայնքի բնակչության բժշկական ապահովումը իրականացնում է քաղաքացիական պաշտպանության Կոտայքի մարզային բժշկական ծառայությունը:

### 3.6.4. ՍՆՆԴԱՄԹԵՐԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

57. Քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված քաղաքացիական պաշտպանության ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

### 3.6.5. ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

58. Լուսաքողարկումը ժամանակակից զենքի տեսակներից քողարկման տեխնիկական ապահովումն է: Այն անցկացվում է մթություն ստեղծելու նպատակով՝ դժվարացնելով համայնքի և կազմակերպությունների հայտնաբերումը օպտիկական սարքերի միջոցով կամ բարձրությունից՝ տեսանելի հայտնաբերման ճանապարհով:

59. համայնքի լուսաքողարկման ապահովում և իրականացնում է Կոտայքի մարզային քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի և լուսաքողարկման ծառայությունը:

60. Լուսաքողարկման կազմակերպչական միջոցառումները ներառում են.

1) բնակավայրի և կազմակերպությունների էլեկտրալուսավորության կառավարման կետերի հերթապահ անձնակազմի նախապատրաստումը.

2) ռազմական դրության ժամանակ օրվա մութ ժամերին հերթապահության կազմակերպումը, բնակավայրերի արտաքին և ներքին լուսավորման անջատումը.

3) ռազմական դրության ժամանակ օրվա մութ ժամերին համայնքապետարանների և համատիրությունների համապատասխան աշխատակիցների վերահսկմամբ՝ բնակարաններում և ընդհանուր օգտագործման բնակավայրերում լուսավորության անջատման համար հերթապահ անձնակազմի նախապատրաստում և հերթապահության կազմակերպում.

61. Լուսաքողարկումը նախատեսվում է 2 ռեժիմով՝ մասնակի մթնեցում և լրիվ մթնեցում:

Մասնակի մթնեցման ռեժիմ մտցնելով տարածքներում պետք է՝

1) անջատվեն մի շարք կազմակերպությունների արտաքին լուսավորության սարքերը և նվազեցվեն մյուս կազմակերպությունների լուսավորությունները, ինչպես նաև լրիվ մթնեցման ռեժիմում աշխատելու համար նախատեսված լուսամփոփների և նշանների վրա տեղադրվեն քողարկման հարմարանքներ.

2) փորձարկվեն աշխատանքային լուսավորության անջատման ու քողարկման լուսավորության միացման համակարգերը:

Լրիվ մթնեցման ռեժիմ մտցնելու համար անհրաժեշտ է.

1) արտաքին լուսավորության անջատում.

2) արտադրական լույսերի լուսաքողարկման միջոցառումների իրագործում.

3) լրիվ մթնեցման ռեժիմում աշխատանքների համար նախատեսված լուսամփոփների ու լուսային նշանների միացում.

4) լրիվ մթնեցման պայմաններին համապատասխանող արտադրության տեխնոլոգիայի անցման իրականացում.

5) արտադրական լույսերի լուսաքողարկման իրականացում.

72. Լրիվ մթնեցման ռեժիմը մտցվում է <<Օդային տագնապ>> ազդանշանով և ավարտվում է <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանով:

## 3.6.6. ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

63. Չափագիտական ապահովումը չափումներ իրականացնող քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների ատեստավորման, ստուգաչափման, կարգաբերման, վերանորոգման, ճիշտ աշխատունակության և տակտիկատեխնիկական տվյալների պահպանման կազմակերպչական տեխնիկական միջոցառումների համալիր է:

64. Չափագիտական ապահովման հիմնական խնդիրներն են՝

1) քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների մշտական պատրաստականության ապահովումը.

2) չափումների միասնականության պահպանումը.

3) սարքերի ճիշտ չափումների և աշխատունակության ապահովումը.

4) չափումների նոր մեթոդների կիրառումը.

5) միջոցների ատեստավորման, չափաբերման և վերանորոգման աշխատանքների կատարումը.

6) քաղաքացիական պաշտպանության չափագիտական ապահովման նորմատիվ–տեխնիկական փաստաթղթերի մշակումը և ներդրումը.

7) չափագիտական ապահովման վիճակի գնահատումը.

8) չափագիտական հսկողության իրականացումը:

65. Չափագիտական ապահովումը ներառում է՝

1) քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների պահպանման, կիրառման, վերանորոգման, ստուգաչափման, անսարք միջոցների դուրս գրման գործընթացների ճիշտ կիրառումը.

2) քաղաքացիական պաշտպանության սարքերի տեխնիկական բնութագրերի հավաստի գնահատման ապահովումը՝ չափիչ միջոցների կիրառմամբ.

3) չափիչ սարքերի փոխանակային ֆոնդի և ռեզերվի ստեղծումը.

4) չափիչ սարքերի ապահովումը պահեստամասերով, վերանորոգման միջոցներով.

5) դեպի ստուգաչափման և վերականգնման տեղամասեր սարքերի փոխադրման կազմակերպումը.

6) չափագիտական ապահովման նպատակով ուժերի և միջոցների նախապատրաստումը.

7) անձնակազմի ուսուցումը քաղաքացիական պաշտպանության սարքերի ճիշտ շահագործման պահպանման և խնամքի ուղղությամբ:

## 3.6.7 ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

66. Քաղաքացիական պաշտպանության հիդրոօդերևութաբանական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է խաղաղ, քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման և ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում, բնակչության և տարածքների պաշտպանության միջոցառումների ընթացքում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ազդեցությունը, փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները հաշվի առնելու նպատակով:

67. համայնքը հիդրոօդերևութաբանական տվյալները ստանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության <<Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան ստորաբաժանումից:

## 3.6.8. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

68. Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:

69. Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու սխամեխանիզմները:

70. Չբավարարող տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ՝ համաձայն համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի ներկայացված հայտերի:

## 3.6.9. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

71. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, խոցման օջախներում և աղետալի ջրածածկման գոտիներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

72. քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումբան միջոցառումները ընդգրկում են՝

1) նախապատրաստում է պաշտպանական կառույցների նախապատրաստումը պատսպարվողների ընդունման համար.

2) ապահովում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների առաջանցման երթուղիները դեպի խոցման օջախներ.

3) վթարային շենքերի և կառույցների քանդման (վերականգնման) աշխատանքները.

4) բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկների համաձայն կազմակերպում է բնակչության պատսպարումը.

բերում:

73. Ինժեներական ապահովման խնդիրները ժամանակին և արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է ունենալ պարբերաբար ստացվող ճշգրիտ տեղեկատվություն՝ ստեղծված օպերատիվ իրավիճակի վերաբերյալ, որը ստացվում է ինժեներական հետախուզության միջոցով:

### 3.6.10. ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

74. Ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանությունը իր մեջ ընդգրկում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական հետախուզությունը, անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների օգտագործումը, դոզաչափական և քիմիական հսկողությունը, ճառագայթային պաշտպանության ռեժիմների պահպանումը, նյութական միջոցների հատուկ մշակումը, տարածքների, ճանապարհների և շինությունների ապազագացումը և ապակտիվացումը, փրկարար ուժերի ապահովումը հակաճառագայթային և հակաքիմիական միջոցներով:

75. Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

76. Ուժեղ ներգործող թունավոր նյութերից բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների ազդարարում.

2) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու վերաբերյալ լրատվամիջոցներով և բարձրախոս սարքերով բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների օպերատիվ տեղեկացում.

3) անհատական պաշտպանության միջոցներով բաշխման իրականացում.

4) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պատսպարում ու տարահանման իրականացում:

### 3.6.11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

77. համայնքի քաղաքացիական պաշտպանության գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի պաշտպանության ապահովումն իրականացնում է Կոտայքի մարզային քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայությունը:

### 3.7 ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

86. Փոխգործողությունը կազմակերպվում է հետևյալ ուղղություններով՝

1) փոխադարձ ազդարարում.

2) հետախուզություն և իրավիճակի վերաբերյալ տվյալների փոխանակում.

3) բնակչության պաշտպանություն.

4) բնակչության տարահանում.

5) հակառակորդի գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետևանքների վերացում.

6) կառավարում:

## Գլուխ IV

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

### 4.1 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ <<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

78. <<Օդային տագնապ>> ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է տատանվող երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

79. Բնակչության ազդարարելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

80. Բնակչության ազդարարումն իրականացվում է՝

1) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից.

2) հակառակորդի հարձակման հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախ, հավանական վտանգավոր, հատուկ, կարևորագույն նշանակության կազմակերպություններում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ

կազմակերպության ղեկավարի կողմից, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջոցով.

81. <<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում անհապաղ իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

1) լրիվ կամ մասնակի լուսաքողարկում, մշտական էլեկտրասնուցման անհրաժեշտություն ունեցող կազմակերպությունների էլեկտրամատակարարման ապահովմամբ.

2) բնակչության պատսպարում կցագրված (կամ մոտակա) պաշտպանական կառույցներում.

3) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պահեստային կառավարման կետեր տեղափոխումը:

82. Հնարավորության դեպքում իրականացվում են անհատական պաշտպանության միջոցների, ճառագայթային և քիմիական հետախուզության սարքերի տեղափոխում պաշտպանական կառույցներ:

83. Կազմակերպություններում արտադրությունների անվթար կանգնեցումը կատարվում է համաձայն նախապես մշակված գրաֆիկի:

84. Անընդհատ տեխնոլոգիական պրոցեսներ ունեցող կազմակերպությունները, որտեղ անհնարին է արտադրական պրոցեսի անվթար կանգնեցումը, աշխատող հերթափոխի աշխատակիցների պատսպարման նպատակով՝ պետք է ստեղծված լինեն առանձին թաքստոցներ անմիջապես աշխատատեղերի մոտ:

### 4.2 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ <<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՎԱՐՏ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

85. <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանը ազդարարվում է կապի և ազդարարման աշխատունակությունը պահպանած տեխնիկական միջոցներով և այլ հնարավոր ձևերով ու եղանակներով՝ տվյալ իրավիճակին համապատասխան մարդկանց վարվելակերպի կանոնների տեքստային հաղորդմամբ:

86. <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանի դեպքում իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

1) ստուգվում և վերականգնում է կառավարման, կապի և ազդարարման համակարգերը.

2) իրականացվում է հետախուզություն՝ հիմնական ուշադրություն դարձնելով առավել մարդաշատ, ինչպես նաև պաշտպանական կառույցների և բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների տեղակայման վայրերին.

3) ճշգրտվում և պատրաստականության են բերվում պահպանված քաղաքացիական պաշտպանության կազմավորումները.

4) կազմակերպվում և անցկացվում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

5) կազմակերպվում և անցկացվում է տուժածների բժշկական օգնություն.

6) կազմակերպվում է քանդված և վնասված պաշտպանական կառույցների վերականգնման և չրավարարող պաշտպանական կառույցների շինարարություն.
7) կազմակերպվում է դոզաչափական հսկողություն:

## Գլուխ V
## 5.1 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

87. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը հանդիսանում է Մարզի քաղաքացիական պաշտպանության պետը և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ողջ գործընթացը:

88. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում 22 ԱԻՆ ՀՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալ:

89. համայնքի և կազմակերպությունների ղեկավարները համապատասխանաբար հանդիսանում են համայնքի և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետեր և կառավարում են իրենց ոլորտի քաղաքացիական պաշտպանության գործընթացը:

90. Քաղաքացիական պաշտպանության պետերը իրենց իրավասության սահմաններում՝

1)պատասխանատվություն են կրում քաղաքացիական պաշտպանության պատրաստականության համար.

2) կազմակերպում և ղեկավարում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.

3) հաստատում և գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները.

4) արձակում են քաղաքացիական պաշտպանությանը վերաբերվող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.

5) վերահսկում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարումը.

6) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

91. Համայնքում և կազմակերպություններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները իրականացնում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

92. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կառավարումը իրականացվում է հիմնական, պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

93. Կառավարման պահեստային կետերը ստեղծվում են նախօրոք՝ խաղաղ ժամանակաշրջանում:

94. Քաղաքացիական պաշտպանության ղեկավար մարմինների կողմից պահեստային կառավարման կետերի պատրաստ վիճակի բերումը և զբաղեցումը իրականացվում է համաձայն <<Լրիվ>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումների ցանկի:

95. համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող կազմակերպությունների ղեկավարները Մարզի քաղաքացիական պաշտպանության պետին զեկույցները ներկայացնում են երկու ժամը մեկ, անհրաժեշտության դեպքում՝ անմիջապես կապի միջոցներով, իսկ միջոցառումների ավարտից հետո՝ գրավոր:

Համայնքի ՔՊ շտաբի պետ՝ [signature] Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

# Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր


Հավելված 1 ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ 01.01.2017Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված 2 ՊԼԱՆ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ

Հավելված 3 ՍԽԵՄԱ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ

Հավելված 4 ՊԼԱՆ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ

Հավելված 5 ՀԱՇՎԱՐԿ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

Հավելված 6 ՀԱՇՎԱՐԿ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ

Հավելված 7 ՀԱՇՎԱՐԿ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Հավելված 8 ՀԱՇՎԱՐԿ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Հավելված 9 ՀԱՇՎԱՐԿ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

Հավելված 10 ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՔՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (գաղտնի)

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի
2017թ. փետրվարի 10-ի N 12 որոշման

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ 01.01.2012 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

| ՀՀ ք/կ | Բովանդակությունը | Չափման միավորը | Ցուցանիշը |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
| | 1. Ընդհանուր տվյալներ | | |
| 1. | Տարածքը | Քառ.կմ | 42.39 |
| 2. | Բնակչությունը.<br>այդ թվում՝ | հազ. մարդ | 602 |
| | - մինչև 1 տարեկան | հազ. մարդ | 0.008 |
| | - 1-9 տարեկան | հազ. մարդ | 0.074 |
| | - 10-17 տարեկան | հազ. մարդ | 0.087 |
| | - 17-ից բարձր | հազ. մարդ | 0.433 |
| | - աշխատունակ տարիքի | հազ. մարդ | 0.200 |
| 3. | Կազմակերպություններ՝ այդ թվում՝ | քանակը | |
| | - խառը կազմակերպություն | քանակը | |
| | - կենսաապահովման | քանակը | |
| | - քիմ. վտանգավոր օբյեկտներ<br>այդ թվում՝ | քանակը | |
| | - աշխատողների քանակը | քանակը | |
| | - վտանգավոր գոտու բնակչության քանակը | քանակը | |
| | - ճառագայթային վտանգավոր օբյեկտներ<br>այդ թվում՝ | քանակը | |
| | - աշխատողների քանակը | քանակը | |
| | - վտանգավոր գոտու բնակչության քանակը | քանակը | |
| | - առավել վտանգավոր ջրամբարներ<br>այդ թվում՝ | քանակը | |
| | - ջրածածկման գոտու բնակավայրերի քանակը | քանակը | |
| | - ջրածածկման գոտու բնակչության քանակը | քանակը | |
| | - հրդեհավտանգ, պայթյունավտանգ օբյեկտներ | քանակը | |
| | -կարևորագույն նշանակության օբյեկտներ | քանակը | |
| 4. | Առկա կառավարման պահեստային կետեր.<br>այդ թվում՝ | քանակը | |
| | -ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերին համապատասխանող | քանակը | |
| | 2. Բնակչության պատսպարում | | |
| 5. | Ենթակա է պատսպարման ընդամենը.<br>այդ թվում՝ | պատսպարվողների քանակը | 602 |
| | - ապաստարաններում | | |
| | - հակաճառագայթային թաքստոցներում | պատսպարվողների քանակը | |
| | -նկուղային և խորացված տարածքներում | պատսպարվողների քանակը | 602 |
| | - պարզագույն թաքստոցների անհրաժեշտ | պատսպարվողների | |

| | | | |
|---|---|---|---|
| | բանակը | բանակը | |
| 3. Անհատական պաշտպանության միջոցներով ապահովում | | | |
| 6. | Հակագազերով՝ բնակչությանը այդ թվում՝ | բանակը | |
| | - մինչև 1.5 տարեկան | բանակը | |
| | - 1.5 – 7 տարեկան | բանակը | |
| | - 7 – 17 տարեկան | բանակը | |
| | - 17-ից բարձր | բանակը | |
| | քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմերը | բանակը | |
| 7. | Շնչադիմակներով քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմերը | բանակը | |
| 8. | Հետախուզական և չափահսկողական սարքերով այդ թվում՝ | բանակը | |
| | - ճառագայթային | բանակը | |
| | - քիմիական | բանակը | |
| | - դոզաչափական հսկողություն | բանակը | |
| 9. | ՔՊ գույքի պահպանումը | բանակը | |
| | - կազմակերպություններում | բանակը | |
| | - պետպահուստի ֆոնդում | բանակը | |
| 4. Տարահանման միջոցառումներ | | | |
| 10. | Տարահանման ենթակա բնակչությունը | բնակավայրերը | |
| | | բնակչության բանակը | |
| | -վտանգավոր ջրածածկման տարածքներից | բնակավայրերը | |
| | | բնակչության բանակը | |
| | - սողանքների տարածքներից | բնակավայրերը | |
| | | բնակչության բանակը | |
| | - քիմիական օբյեկտների հարակից վտանգավոր տարածքներից | բնակավայրերը | |
| | | բնակչության բանակը | |
| 5. Քաղաքացիական պաշտպանության ուժեր | | | |
| 11. | Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ | բանակը | 6 |
| | | անձնակազմը | 34 |
| | Քաղաքացիական պաշտպանության բժշկական կազմավորումներ | բանակը | |
| | | անձնակազմը | |
| 6. Ավտոտրանսպորտ | | | |
| 12. | Տրանսպորտային միջոցներ | բանակը | 5 |
| 13. | Ինժեներական տեխնիկա | բանակը | 3 |

Համայնքի ՔՊ շտաբի պետ [signature] Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
քաղաքացիական պաշտպանության ծրագրի
2017թ. փետրվարի 10-ի N 12 որոշման

# ՊԼԱՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԷՐԱՎԻՃԱԿԻ



# ՑԱՆԿ

## ՏԵՂԱՆՇՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

| Հ/հ | Օբյեկտների անվանում | հասցե | Գործող/չգործող | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | համայնքապետարան | 1 Փ2 շենք | գործող | |
| 2 | մշակույթի կենտրոն | | | |
| 3 | դպրոց | 1 Փ 1 շենք | գործող | |
| 4 | մանկապարտեզ | 2 Փ 6 շենք | չգործող | |
| 5 | ֆերմաներ | 9 Փ 4 շենք<br>8 Փ 3 շենք<br>7 Փ 5 շենք | գործող<br>չգործող<br>չգործող | |
| 6 | գործարան | | | |
| 7 | կահույքի արտադրամաս | | | |
| 8 | փոստային բաժանմունք | | | |
| 9 | բուժ. հաստատություն | | | |
| 10 | խանութ | 1 Փ 24<br>4 Փ 6 | գործող<br>գործող | |
| 11 | կամուրջ | | | |
| 12 | ջրավազան | | | |
| 13 | լիճ. | | | |
| 14 | գետ | | | |
| 15 | գազատար խողովակներ/մայրուղային/ | | | |
| 16 | ջրատար խողովակներ/մայրուղային/ | | | |
| 17 | գազալցակայան | | | |
| 18 | բենզալցակայան | | | |
| 19 | հանգստյան տուն | | | |

Հավելված 3
22 Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի
2017թ. Փետրվարի 10-ի N 22 որոշման

# ՍԽԵՄԱ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ




Ծանոթություն՝ ազդարարումն իրականացվում է ռադիոկապի, քաղաքային և բջջային հեռախոսակապի միջոցներով

Համայնքի ՔՊ շտաբի պետ [signature] Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված 4
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատի համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի
2017թ. փետրվարի 10-ի N 12 որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ



Հավելված 5
ՀՀ Կոտայքի մա[illegible]
քաղաքացիական պ[illegible]
2017թ. փետրվարի 10-ի N 12 [illegible]

ՀԱՇՎԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

| ՀՀ ը/կ | Բնակչության թվաքանակը | Հակագազերի քանակը | | Շնչադիմակների քանակը | | Բժշկական պաշտպանության միջոցների քանակը | | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առկա | անհրաժեշտ | առկա | անհրաժեշտ | առկա | անհրաժեշտ | |
| 1. | 2. | 3. | 4. | 5 | 6. | 7. | 8. | 9 |
| | 602 | | 602 | | 40 | | 40 | |
| | | | | | | | | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ [signature] Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի
2017թ. փետրվարի 10-ի N 12 որոշման

ՀԱՇՎԱՐԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ

| ՀՀ ը/կ | Բնակչու-թյան թվաքանա-կը | Այդ թվում | | | | | | Բնակչութ-յան պատս-պարվա-ծությունը % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը պատսպար վում են | Ապաս-տարաններ | Հակաճառագայ թային թաքստոց-ներ | Բնակելի շենքերի և սեփական տների նկուղներ | Կազմակերպությա ն շենքերի նկուղներ | Ստորգետնյա կայարանատեղե ր, անցումներ և այլ տարածքներ | |
| 1. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. | 10 |
| | 602 | | | | 130\|524 | 1\|100 | | 100 |
| | | | | | | | | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ [signature] Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված 7
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի
2017թ. փետրվարի 10-ի N 13 որոշման

# ՀԱՇՎԱՐԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| 22 ը/կ | Կազմավորում-ների անվանումը | Կազմավորման առնծման բազան | Կազմա-վորումների | | Տեխնիկայով և գույքով ապահովում | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ավտոտեխնիկա | | | | | | ճանապարհաշինա-րարական և ամբարձիչ տեխնիկա | | | | հատուկ տեխնիկա | | | | քաղաքացիական պաշտպանության գույք | | | |
| | | | | | մարդատար | | բեռնատար | | և այլն | | մղանային | | և այլն | | ջրատար | | և այլն | | անհատական պաշտպա-նության միջոցներ | | և այլն | |
| | | | թիվը | անձնակազմի թվաքանակը | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է | առկա է | անհրաժեշտ է |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 49 | 20 | 21 | 22 | 23 |
| 1 | Փրկարարական ջոկատ | | | 14 | | 1 | | 2 | | | | 1 | | | | | | 1 | | 14 | | |
| 2 | Կապի օղակ | | | 3 | | | | | | | | | | | | | | | | 3 | | |
| 3 | Հասարակական կարգի պահպանման խումբ | | | 7 | | 2 | | | | | | | | | | | | | | 7 | | |
| 4 | Վթարատեխն. խումբ | | | 4 | | | | 1 | | | | | | | | | | | | 4 | | |
| 5 | Գյուղ.կենդ. և բույս Պաշտպանման խումբ | | | 3 | | | | 1 | | | | | | | | | | | | 3 | | |
| 6 | Ռ և Ք դիտարկման կետ | | | 3 | | | | | | | | | | | | | | | | 3 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 34 | | 3 | | 4 | | | | 1 | | | | | | 1 | | 34 | | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ [signature] Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված 8
ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբեր համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի
2017թ. փետրվարի 10-ի N 12 որոշման

ՀԱՇՎԱՐԿ
ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Կապի միջոցների տեսակը | Անհրաժեշտ քանակ (հատ) | Առկա քանակ (հատ) | Պակաս քանակ (հատ) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Ստացիոնալ ռադիոկայան | 1 | | 1 | |
| 2 | Դյուրակիր ռադիոկայան | 10 | | 10 | |
| | | | | | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբաց համայնքի
քաղաքացիական պաշտպանության [illegible]
2017թ.փետրվարի 10-ի N 12 որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

| հ/հ | Համայնքի անվանումը | [illegible] | | | [illegible] | | | Մղան | | | [illegible] | | | Խոտհնձիչ | | | [illegible] | | | [illegible] | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը | Լրաց ուցիչ պա հան ջվում է | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը | Լրաց ուցիչ պա հան ջվում է | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը | Լրաց ուցիչ պա հան ջվում է | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը | Լրաց ուցիչ պա հան ջվում է | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը | Լրաց ուցիչ պա հան ջվում է | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը է | Լրաց ուցիչ պա հան ջվում է | Առկա տեխն քանա կը | Ան հրա մեշտ. քանա կը | Լրաց ուցիչ պա հան ջվում է |
| 1. | Սարիբեկյան Հովակիմ Հայկի | | | | | | | | | | | | | | | | | | | 1 | | |
| 2. | Մելքոնյան Գառնիկ Արամայիսի | | | | | | | | | | | | | | | | | | | 1 | | |
| 3. | Կյուրեղյան Արսեն Ջանիբեկի | | | | | | | | | | | | | | | | | | | 1 | | |
| 4. | Ալեքսանյան Ռուդիկ | | | | | | | | | | | | | | | | | | | 1 | | |
| 5. | Այվազյան Միքաել | | | | | | | | | | | | | | | | | | | 1 | | |
| ընդամենը | | 5 | 13 | 8 | | 2 | | | 2 | | | 2 | | | 4 | | | | | 5 | 3 | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
22, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 13

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13 րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել՝

ա/Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցույթային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված1:

բ/Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2:

2. Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգային նիստերի տեխնիկական սպասարկման լիազորությունները դրվում են աշխատակազմի քարտուղարի վրա, իսկ նրա բացակայության դեպքում աշխատակազմի գլխավոր մասնագետի վրա:

3. Համայնքային ծառայողների ատեստավորման և մրցույթների ընթացքում հանձնաժողովների աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները դրվում են՝

ա/ աշխատակազմի գլխավոր մասնագետի վրա, աշխատակազմի քարտուղարի ատեստավորման կամ աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնի համալրման նպատակով անցկացվող մրցույթի ընթացքում:

բ/ աշխատակազմի քարտուղարի վրա, համայնքային ծառայողների ատեստավորման կամ համայնքային ծառայության թափուր պաշտոնի /պաշտոնների/ համալրման նպատակով անցկացվող մրցույթի /մրցույթների ընթացքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ. ____

գ.Ջրառատ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ
համայնքի ղեկավարի 2016թ.
փետրվարի 14-ի № 4 որոշման

# Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) անցկացնող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովը ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն աշխատակարգով, ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 29 օգոստոսի 2006թ. № 12-Ն հրամանով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Ջրառատ համայնքի ղեկավարը, Ջրառատ համայնքի ավագանու մինչև 5 անդամներ, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի 3 ներկայացուցիչ: Հանձնաժողովում մարզպետարանի ներկայացուցիչ չի կարող լինել տվյալ համայնքի ավագանու անդամը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշվում են Ջրառատ համայնքի ավագանու կողմից:

4. Ջրառատ համայնքի ղեկավարը Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչների մասին տվյալներն ստանալուց հետո 20-օրյա ժամկետում իր որոշմամբ ստեղծում է հանձնաժողով և հաստատում դրա անհատական կազմը:

Հանձնաժողովի անհատական կազմում Ջրառատ համայնքի ղեկավարը փոփոխություններ է կատարում, եթե՝

ա) փոխվել է Ջրառատ համայնքի ղեկավարը,

բ) Ջրառատ համայնքի ավագանին փոխել է հանձնաժողովում ընդգրկված ավագանու անդամների քանակական և (կամ) անհատական կազմը,

գ) ներկայացվել է Կոտայքի մարզպետարանի այլ ներկայացուցիչ (ներկայացուցիչներ):

5. Հանձնաժողովի նախագահը Ջրառատ համայնքի ղեկավարն է:

Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անհատական կազմի հաստատումից հետո 20-օրյա ժամկետում հրավիրում է հանձնաժողովի աշխատակարգային նիստ, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահի տեղակալ, որը հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում իրականացնում է նրա լիազորությունները:

6. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկել համապատասխան մասնագետի:

Հանձնաժողովի կազմում մասնագետի ընդգրկման հարցը բարձրացվում է հանձնաժողովի նախագահի և (կամ) հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Այդպիսի նախաձեռնության դեպքում հանձնաժողովի նախագահը մրցույթի անցկացման օրվան նախորդող 7-10 օրվա ընթացքում հրավիրում է հանձնաժողովի աշխատակարգային նիստ, որում քննարկվում և սույն աշխատակարգի 13-րդ կետին համապատասխան ընդունվում է որոշում՝ տվյալ մրցույթի (մրցույթների) անցկացման ժամանակ հանձնաժողովի կազմում համապատասխան մասնագետի ընդգրկման մասին: Նշված որոշումն ընդունվելու դեպքում հանձնաժողովը հաստատում է նաև մասնագետի թեկնածությունը:

7. Հանձնաժողովի նախագահը մրցույթի անցկացումից ոչ ուշ, քան 7 օր առաջ հանձնաժողովի անդամներին ծանուցում է մրցույթի անցկացման մասին:

Ծանուցման մեջ պետք է նշվեն՝

ա) մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը,

բ) այն պաշտոնը (պաշտոնները), որի (որոնց) զբաղեցման համար անցկացվում է մրցույթը,

գ) մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը:

Սույն աշխատակարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում հանձնաժողովի անդամներին ծանուցվում է աշխատակարգային նիստի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցի (հարցերի) մասին։

8. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը, որը մրցույթի մասնակիցներին (այսուհետև մասնակիցներ) բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովի խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) համար համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու հավասար մատչելիության ապահովումը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.

բ) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը:

10. Հանձնաժողովը՝

ա) աշխատակազմից ստանում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը, մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների փաստաթղթերը, թեստավորման անցկացման համար անհրաժեշտ ամփոփաթերթերը և տվյալ թափուր պաշտոնի անձնագրի օրինակը.

բ) քննության է առնում փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը և ընդունում որոշում դիմած անձանց մրցույթին մասնակցելու թույլատրության մասին.

գ) մինչև թեստավորումն սկսելն ստուգում է ամփոփաթերթերը.

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած կարգով կազմում է թեստեր՝ թեստավորման փուլն անցկացնելու համար.

ե) անցկացնում է մասնակիցների թեստավորում.

զ) ստուգում և գնահատում է մասնակիցների թեստավորման առաջադրանքները.

է) ամփոփում և հրապարակում է թեստավորման արդյունքները.

ը) քննարկում է մասնակիցների բողոքները՝ կապված թեստավորման արդյունքների հետ.

թ) հրապարակում է մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակը.

ժ) ընդունում է որոշում հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին.

ժա) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց.

ժբ) կազմում է մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթեր.

ժգ) հարցազրույցից անմիջապես հետո գնահատում է յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները և հաշվարկում յուրաքանչյուր մասնակցի ստացած դրական բալերի հանրագումարը.

ժդ) ամփոփում է մրցույթի արդյունքները.

ժե) քննարկում է առաջացած հարցերը.

ժզ) հրապարակում է մրցույթի արդյունքները.

ժէ) մրցույթի արդյունքների հրապարակումից հետո նույն օրը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմին է

ներկայացնում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացություն.

ժը) աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և մրցութային փաթեթը.

ի) իրականացնում է օրենքով, սույն աշխատակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից հաստատված իր աշխատակարգով և թեստավորման արդյունքների հետ կապված իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

12. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

13. Հանձնաժողովի որոշումն ընդունվում է, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

բ) վարում է հանձնաժողովի նիստերը.

գ) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները՝ սահմանված կարգի համաձայն.

դ) մինչև թեստավորումն սկսելը՝ հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում և իր

ստորագրությամբ վավերացրած թերթը փակցնում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա.

ե) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

զ) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

է) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

15. Հանձնաժողովի անդամը՝

ա) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը.

բ) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

գ) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր տալ մասնակիցներին՝ բարձրաձայն հայտարարելով պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ տալով ճիշտ պատասխանը.

դ) հարցազրույցի արդյունքում գնահատում է յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները՝ մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթերում՝ գաղտնիության պայմաններում.

ե) մասնակցում է յուրաքանչյուր մասնակցի ստացած դրական բալերի հանրագումարի հաշվարկմանը.

զ) ստորագրում է մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում՝ ստորագրության կողքին գրառում է՝ «հատուկ կարծիքը կցվում է», և հանձնաժողովի նախագահին է հանձնում իր կողմից ստորագրված հատուկ կարծիքը.

է) ծանոթանում է նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք.

ը) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

16. Մրցույթը համարվում է ավարտված՝ հանձնաժողովի կողմից աշխատակազմին մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացություն տալու պահից:

17. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 2
ՀՀ կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
ղեկավարի 2016թ. փետրվարի 14-ի № 4 որոշման

# Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց (այսուհետ` համայնքային ծառայողներ) ատեստավորման հանձնաժողովի (այսուհետ` հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովը ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ` օրենք), սույն աշխատակարգով, ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 29 օգոստոսի 2006թ. N 12 հրամանով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Ջրառատ համայնքի ղեկավարը, Ջրառատ համայնքի ավագանու մինչև հինգ անդամները և Կոտայքի մարզպետարանի 3 ներկայացուցիչ: Հանձնաժողովում մարզպետարանի ներկայացուցիչ չի կարող լինել Ջրառատ համայնքի ավագանու անդամը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշվում են համայնքի ավագանու կողմից:

4. Ջրառատ համայնքի ղեկավարը Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչների մասին տվյալներն ստանալուց հետո 20-օրյա ժամկետում իր որոշմամբ ստեղծում է հանձնաժողով և հաստատում դրա անհատական կազմը:

Ջրառատ համայնքի ղեկավարը հանձնաժողովի անհատական կազմում կատարում է փոփոխություններ, եթե`

ա) փոխվել էՋրառատ համայնքի ղեկավարը,

բ) Ջրառատ համայնքի ավագանին փոփոխել է հանձնաժողովում ընդգրկված ավագանու անդամների քանակական և (կամ) անհատական կազմը,

գ) ներկայացվել է Կոտայքի մարզպետարանի այլ ներկայացուցիչ (ներկայացուցիչներ):

5. Հանձնաժողովի նախագահը Ջրառատ համայնքի ղեկավարն է:

Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անհատական կազմը հաստատելուց հետո 20-օրյա ժամկետում հրավիրում է հանձնաժողովի աշխատակարգային նիստ, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահի տեղակալ, որը հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում իրականացնում է նրա լիազորությունները:

6. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է իր որոշմամբ հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկել համապատասխան մասնագետի: Հանձնաժողովի կազմում մասնագետի ընդգրկման հարցը բարձրացվում է հանձնաժողովի նախագահի և (կամ) հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Այդպիսի նախաձեռնության դեպքում հանձնաժողովի նախագահը` ատեստավորման անցկացման օրվան նախորդող 7-10 օրվա ընթացքում հրավիրում է

հանձնաժողովի աշխատակարգային նիստ, որում քննարկվում և սույն աշխատակարգի 13-րդ կետին համապատասխան ընդունվում է որոշում՝ տվյալ ատեստավորման անցկացման ժամանակ հանձնաժողովի կազմում համապատասխան մասնագետի ընդգրկման մասին: Նշված որոշումն ընդունվելու դեպքում հանձնաժողովը հաստատում է նաև մասնագետի թեկնածությունը:

7. Հանձնաժողովի նախագահն ատեստավորման անցկացումից ոչ ուշ, քան 7 օր առաջ հանձնաժողովի անդամներին ծանուցում է ատեստավորման անցկացման մասին:

Ծանուցման մեջ պետք է նշվեն՝

ա) ատեստավորման անցկացման օրը, ժամը և վայրը,

բ) այն պաշտոնները (պաշտոնը), որոնք զբաղեցնող համայնքային ծառայողներն ատեստավորվում են,

գ) ատեստավորվող համայնքային ծառայողների թիվը:

Սույն աշխատակարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում հանձնաժողովի անդամներին ծանուցվում է աշխատակարգային նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

8. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը, որը ատեստավորվող համայքային ծառայողներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում է և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում նիստերի արձանագրությունները:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովի խնդիրը ատեստավորման միջոցով՝ որոշումն է իր զբաղեցրած պաշտոնին համայնքային ծառայողի համապատասխանության, ինչպես նաև ավելի բարձր դասային աստիճանի շնորհման նպատակահարմարության:

10. Հանձնաժողովը՝

ա) աշխատակազմից ստանում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը, ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցանկը և այդ համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի օրինակները, ծառայողական բնութագրերը և դրանց վերաբերյալ առկա առարկությունները.

բ) իրականացնում է քննարկումներ առանձին հարցերի շուրջ.

գ) մինչև թեստավորումն սկսելն ստուգում է ամփոփաթերթերը.

դ) անցկացնում է փաստաթղթային ատեստավորում.

ե) Ուժը կորցրած ճանաչել

զ) սահմանված կարգով կազմում է թեստերը՝ թեստավորման փուլն անցկացնելու համար.

է) անցկացնում է համայնքային ծառայողների թեստավորում.

ը) ստուգում և գնահատում է համայնքային ծառայողների թեստավորման առաջադրանքները.

թ) հաստատում և հրապարակում է թեստավորման արդյունքները.

ժ) քննարկում է թեստավորման արդյունքների հետ կապված համայնքային ծառայողների բողոքները.

ժա) հրապարակում է ատեստավորման հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած հանայնքային ծառայողների ցուցակը.

ժբ) ընդունում է որոշում հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին.

ժգ) համայնքային ծառայողի հետ անցկացնում է հարցազրույց.

ժդ) կազմում է ատեստավորվողների գործնական կարողությունների գնահատման թերթեր.

ժե) կազմում է քվեաթերթեր.

ժզ) հարցազրույցից անմիջապես հետո անցկացնում է գաղտնի քվեարկություն.

ժէ) քվեարկության արդյունքում յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ ընդունում է որոշում.

ժը) ամփոփում է ատեստավորման արդյունքները.

ժթ) յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ կազմում է ատեստավորման թերթ.

ի) Ուժը կորցրած ճանաչել.

իա) աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և ատեստավորման փաստաթղթերի փաթեթը.

իբ) իրականացնում է օրենքով, սույն օրինակելի աշխատակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ իր աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

12. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

բ) վարում է հանձնաժողովի նիստերը.

գ) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները՝ սահմանված կարգի համաձայն.

դ) մինչև թեստավորումն սկսելը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում և իր ստորագրությամբ վավերացրած թերթը փակցնում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա.

ե) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

զ) որոշում է ատեստավորման հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

է) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

15. Հանձնաժողովի անդամը՝

ա) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը.

բ) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

գ) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր տալ մասնակիցներին.

ժդ) կազմում է ատեստավորվողների գործնական կարողությունների գնահատման թերթեր.

ժե) կազմում է քվեաթերթեր.

ժզ) հարցազրույցից անմիջապես հետո անցկացնում է գաղտնի քվեարկություն.

ժէ) քվեարկության արդյունքում յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ ընդունում է որոշում.

ժը) ամփոփում է ատեստավորման արդյունքները.

ժթ) յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ կազմում է ատեստավորման թերթ.

ի) Ոժը կորցրած ճանաչել.

իա) աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և ատեստավորման փաստաթղթերի փաթեթը.

իբ) իրականացնում է օրենքով, սույն օրինակելի աշխատակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ իր աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

12. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

բ) վարում է հանձնաժողովի նիստերը.

գ) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները՝ սահմանված կարգի համաձայն.

դ) մինչև թեստավորումն սկսելը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում և իր ստորագրությամբ վավերացրած թերթը փակցնում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա.

ե) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

զ) որոշում է ատեստավորման հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

է) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

15. Հանձնաժողովի անդամը՝

ա) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը.

բ) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

գ) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր տալ մասնակիցներին.

դ) բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում տալիս է ճիշտ պատասխանը.

ե) մասնակցում է հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր համայնքային ծառայողի համար անցկացվող գաղտնի քվեարկությանը.

զ) ստորագրում է ատեստավորման թերթը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է՝ «հատուկ կարծիքը կցվում է», հանձնաժողովի նախագահին է հանձնում իր կողմից ստորագրված հատուկ կարծիքը.

է) ծանոթանում է նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք.

ը) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## VI. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

16. Ատեստավորումը համարվում է ավարտված՝ հանձնաժողովի կողմից ատեստավորման արդյունքները հրապարակելու պահից:

17. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 14

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի

2016թվականի փետրվարի 14-ի <<Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին և համայնքի ղեկավարի 2007թ. ապրիլի 19-ի թիվ 7, 2009թ. մայիսի 4-ի թիվ 10, 2012թ. հուլիսի 23-ի թիվ 21 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 4 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 15

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 25 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշման սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

Թորգոմ Հակոբյանին սեփականության իրավունքով պատականող /սեփականության վկայական թիվ 1318875/ բնակելի տանը Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում տրվել է հասցե՝ 4-րդ փողոց, 1 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ________________
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 16

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել <<ԱՐՏԷԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյաններին պատկանող հողամասի հատակագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ.
գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 17

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 25 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշման սահմանված կարգով՝ *որոշում եմ.*

Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյաններին պատականող շինությանը /բնակելի տան, տնտեսական շինություն, անասնաշենք, ծածկ/ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում տրվել է հասցե՝ 5-րդ փողոց, 18-20 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ.
գ.Ջրառատ

4. Հողամասի սահմանները որոշվում են <<ԱՐՏԷԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Ջրառատ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5. Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյաններին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե՝ գյուղ Ջրառատ, փողոց 5-րդ 18-20:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյանների սեփականության իրավունքները ամրագրված հողամասի և բնակելի տան, անասնաշենքի, տնտեսական շինության և ծածկի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________

գ.Ջրառատ

4. Հողամասի սահմանները որոշվում են <<ԱՐՏԷԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Ջրառատ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5. Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյաններին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե՝ գյուղ Ջրառատ, փողոց 5-րդ 18-20:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյանների սեփականության իրավունքները ամրագրված հողամասի և բնակելի տան, անասնաշենքի, տնտեսական շինության և ծածկի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ. ____________

գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 19

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հավաքների ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական հիմնադրամի նախագահի լիազորված անձ Կարեն Մարգարյանի 2017թվականի մարտի 6-ի թիվ 44-Ս/Ս իրազեկումը.

1. 2017թվականի մարտի 6-ի Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական հիմնադրամի նախագահի լիազորված անձ Կարեն Մարգարյանի իրազեկումը և ժամանակացույցը ընդունել ի գիտություն:

2. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Հրազդանի բաժնին՝ ապահովել հանդիպումների ընթացքում օրինականությունը և հասարակական կարգի պահպանումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորոգրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ. ____________
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2017թվականի N 20

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ ***որոշում եմ.***

2017թվականի մարտի 16-ին ժամը 13⁰⁰-ին հրավիրել Ջրառատ համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով

1. Ջրառատ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին

2. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

3. <<Հայաստանի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը անդամակցելու և անդամավճար վճարելու մասին

4. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ն, 16-Ն, 17-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին

5. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի հուլիսի 15-ի թիվ 25-Ա, 26-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին

6. Կոտայքի մարզպետարանի կողմից 2017թվականի փետրվարի 22-ից մինչև 24-ը իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20___թ. ____________ ____

գ .Ջ ր առ ատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2017թվականի N 21

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ *որոշում եմ.*

1.Հաստատել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի կարիքների համար 2017թվականին կատարվող գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__թ.
գ.Ջրառատ

Հաստատում եմ
Ջրառատ համայնքի ղեկավար
Ա.Մ. Ամիտրյան

-----------------------------
Կ.տ

16 մարտի 2017թ.

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

| |
|---|
| Պատվիրատուն՝ Ջրառատ համայնքապետարան |
| /ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման՝ 207056 |
| Ծրագիրը՝ 2017թ. համայնքային բյուջեից իրականացվող |
| Անվանումը՝ օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում |
| Բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51 |

| N | *Գնման առարկայի* | | *Գնման ձևը /ընթացակարգը/* | *Չափման միավորը* | *Միավորի գինը* | *Ընդամենը ծախսերը /դրամ/* | *Քանակը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման* | *Անվանումը* | | | | | |
| | | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| 1 | 65300000 | Էլեկտրականության բաշխման և դրա հետ կապված ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | 700000 | 700000 | 1 |
| 2 | 90500000 | Աղբահանություն | | դրամ | 100000 | 100000 | 1 |
| 3 | 64211000 | Հեռախոսային ծառայություններ | | դրամ | 232000 | 232000 | 1 |
| | | ԱՊՐԱՆՔՆԵՐ | | | | | |
| 4 | 30197622 | Գրասենյակային նյութեր | ԲԸԱՀ | դրամ | 200000 | 200000 | 1 |
| 5 | 9134210 | Դիզելային վառելիք | ԲԱԸՀ | դրամ | 200000 | 200000 | 1 |
| 6 | | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | ԲԱԸՀ | դրամ | 100000 | 100000 | 1 |
| 7 | 39221470 | Հատուկ նպատակային նյութեր | ԲԱԸՀ | դրամ | 100000 | 100000 | 1 |
| 8 | 45000000 | Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում | ԲԱԸՀ | դրամ | 370000 | 370000 | 1 |
| 9 | 45000000 | Շենքերի և շինությունների կառուցում | ԲԱԸՀ | դրամ | 1037900 | 1037900 | 1 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 3039900 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիրը՝ *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ* | | | | | | | |
| Բաժին 1, խումբ 6, դաս 1, ծրագիր 51 | | | | | | | |
| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| 1 | 71241000 | Խորհրդատվական ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | 180000 | 180000 | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիրը՝ *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ* | | | | | | | |
| Բաժին 1, խումբ 3, դաս 3, ծրագիր 51 | | | | | | | |
| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| 1 | 48000000 | Համակարգչային ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | 14000 | 14000 | 1 |
| 2 | 22211000 | Տեղեկատվական ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | 106000 | 106000 | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիրը՝ Շրջակա միջավայրի պաշտպանություն | | | | | | | |
| Բաժին 4, խումբ 2, դաս 1, ծրագիր 51 | | | | | | | |
| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| 1 | 71241000 | Խորհրդատվական ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | 30000 | 30000 | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիրը՝ հանգիստ ,մշակույթ և կրոն | | | | | | | |
| Բաժին 8, խումբ 4, դաս 2, ծրագիր 51 | | | | | | | |
| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| 1 | 99600000 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | ԲԸԱՀ | դրամ | 36000 | 36000 | 1 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏԻ 2017թվականի N 22

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ջրառատ համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության հետևյալ համայնքային ծառայությունները.

1/ Բժշկական ծառայություն

2/ Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն

3/ Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն

4/ Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն

2. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ համայնքի ղեկավարի 2011թվականի ապրիլի 20-ի <<Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնքում քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ ստեղծելու մասին>> թիվ 12 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Ջրառատ

Կոտայքի մարզի
Ջրառատ համայնքի ղեկավարի
2017թվականի մարտի 21-ի N 22 որոշման

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բժշկական ծառայություն՝

    1) Մկրտչյան Նարինե Հովհաննեսի
    2) Դագդավերյան Արուս Արամի
    3) Ավետիսյան Լիլիա Սերգեյի

2. Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝

    1) Սարիբեկյան Հովակիմ Հայկի
    2) Նամալյան Արայիկ Վանյայի
    3) Պողոսյան Մակիչ-Ջան Լևոնի

3. Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝

    1) Ալքսանյան Մանիկ Եղիազարի
    2) Գրիգորյան Գրիգոր Հրաչի
    3) Հարությունյան Յուրիկ Մենտորի

4. Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն՝

    1) Տեր-Ավետիսյան Գարիկ Մուշեղի
    2) Նազարյան Արմեն Մինասի
    3) Սարկիսով Էդուարդ Ռազմիկի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՐՏԻ 2017թվականի N 23

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված Ջրառատ համայնքում 2017թվականին իրականացվելիք միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Ջրառատ

Հավելված
Ջրառատ համայնքի ղեկավարի
2017 թվականի մարտի 24-ի
թիվ 23 որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

| | ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|---|---|
| 1. | Ցեղասպանության զոհերի հիշատակի օր | 24 ապրիլի | այցելություն Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում գտնվող եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան |
| 2 | Հաղթանակի և խաղաղության տոն | 9 մայիսի | Հայրենական Մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում տարած հաղթանակների կապակցությամբ կազմակերպել այցելություն Հրազդան քաղաքի հայրենիքի պաշտպանի հուշարձան: |
| 3. | Երեխաների իրավունքների պաշտպանության օր | 1 հունիսի | Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1 –ին համայնքապետարանի բակում կազմակերպել տոնական միջոցառում: |
| 4. | Ամանոր | 25 – 27 դեկտեմբեր | դպրոցում անցկացնել Նոր տարվան նվիրված տոնական հանդեսներ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 24

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լուսինե Եղիազարյանին սահմանել գնումների համակարգող:

2. Գնումների համակարգողը՝

1/ պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար

2/եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ

3/ իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները

4/ կազմում և պատվիրատուին է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__թ. ______
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 25

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 5 ՓՈՂՈՑԻ 18-20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՆԱՄՆԱԳՈՄԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԾԱԾԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԿ ԵՎ ՄՈՒՇԵՂ ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրքի 60-րդ և 64-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հայկ Խաչատուրի Տեր- Ավետիսյանի/31.01.1952թ., ք.Հրազդան միկրոշրջան 235/10, անձնագիր AN 0735130/ և Մուշեղ Խաչատուրի Տեր-Ավետիսյանի/01.01.1962թ., ք.Հրազդան միկրոշրջան 108/39, անձնագիրAN 0305710/ դիմումները՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայկ Խաչատուրի Տեր-Ավետիսյանի /ծնված 31 հունվարի 1952թ., ք. Հրազդան միկրոշրջան 235/10, անձնագիր AN 0735130/ և Մուշեղ Խաչատուրի Տեր-Ավետիսյանների / ծնված 01 հունվարի 1962թ., ք.Հրազդան միկրոշրջան 108/39, անձնագիր AN 0305710/սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 004-002, 004-001 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.2028հա մակերեսով տնամերձ

հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001թվականի մայիսի 15-ը:

2. Վերականգնել Ջրառատ համայնքի 5-րդ փողոցի 18-20 հասցեում գտնվող 0.2028հա հողամասի վրա մինչև 2001թվականի մայիսի 15-ը կառուցված 374.07քմ բնակելի տան, անասնաշենքի, տնտեսական շինության և ծածկի նկատմամբ Հայկ Խաչատուրի Տեր-Ավետիսյանի /31 հունվարի 1952թ., ք.Հրազդան միկրոշրջան 235/10, անձնագիր AN 0735130/ և Մուշեղ Խաչատուրի Տեր-Ավետիսյանի /01 հունվարի 1962թ., ք.Հրազդան միկրոշրջան 108/39, անձ. AN 0305710/սեփականության իրավունքը:

3. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, համապատասխանում են քաղաքաշինական նորմերին, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չեն առաջացնում սերվիտուտ:

4. Հողամասի սահմանները որոշվում են <<ԱՐՏԵԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Ջրառատ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5. Հայկ Խաչատուրի Տեր-Ավետիսյանին և Մուշեղ Խաչատուրի Տեր-Ավետիսյանին պատկանող անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գյուղ Ջրառատ, 5-րդ փողոց 18-20:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզային ստորաբաժանմանը գրանցել Հայկ Խաչատուրի Տեր-Ավետիսյանի և Մուշեղ Խաչատուրի Տեր-Ավետիսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքները ամրագրված հողամասի և բնակելի տան, անասնաշենքի, տնտեսական շինության և ծածկի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__թ. ____________

գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 26

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 01-Ի ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի

2017թվականի մարտի 01-ի <<Հողատարածքից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 5 փողոցի 18-20հասցեում գտնվող բնակելի տան, անասնագոմի, տնտեսական շինության, ծածկի նկատմամբ Հայկ և Մուշեղ Տեր-Ավետիսյանների իրավունքները վերականգնելու մասին>> թիվ 18 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 Մայիսի 2017թվականի N 27

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 25 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշման սահմանված կարգով` *որոշում եմ.*

Բաղրամյան Նիկոլայ Աշոտի սեփականության իրավունքով պատկանող /գրանցման գիրք 15-2/ բնակելի տանը Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում տրվել է հասցե` 3-րդ փողոց, 11 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523 jrarat.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2017 N 28

«ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 17.05.2017թվականի N01/12.2/2044-17գրությունը՝ *որոշում եմ.*

1.«Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Սարիբեկյան Մուշեղ – համայնքի բնակիչ

Սահակյան Հակոբ – համայնքի ավագանու անդամ,

Բեգլարյան Ալեքսան – Ջրառատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրեն,

Ալեքսանյան Միրան – համայնքի բնակիչ

2. Հանձնարարել աշխատանքային խմբին՝

1)բարձրացնել համայնքի բնակչության և ուսումնական հաստատության իրազեկվածությունն ու մասնակցությունը շրջակա միջավայրի մաքրության պահպանության գործում,

2) կազմակերպել համայնքի վարչական տարածքում ճանապարհների, ճանապարհամերձ հատվածներում կուտակված աղբի հավաքման և աղբավայր տեղափոխման աշխատանքները,

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

20-թ. ______
գ. Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017 N 29

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 6-ի N 01/15.1/1904-17 և 2017 թվականի մայիսի 17-ի N 01/15.2/2064-17 գրությունների՝ *որոշում եմ.*

1. 2017 թվականի մայիսի 27-ին համայնքի տարածքում կազմակերպել և անցկացնել համայնքային շաբաթօրյակ, իրականացնել սանիտարական մաքրման, աղբահեռացման միջոցառումներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

20-թ. ____________
գ. Ջրառատ